

ԵՐԵՎԱՆԻ ՕՊԵՐԱՏՈՐ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցքով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպեկի.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

ԲՈՒՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գործնական եղանակը. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Անվերջ ցաւեր. Նամակ Բորթոմից.
Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր. ՀԵՌԱՅԻՆՈՒԹԻՒՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Նամակ Թիւր-
քիայից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Մի քանի տեղերից մեզ հարցեր են տա-
լիս, թէ ինչ ձևով կարելի է մանր ընկե-
րակցութիւններ կազմել գիւղերում և բար-
ւոյն տեղական տնտեսութիւնը:

Այդ հարցով հետաքրքրուողների մի քա-
նիստ իրանք կազմում են կանոնադրու-
թեան ծրագիր, մտնելով նրանց մէջ իրանց
ցանկացած կէտերը: Սակայն ծրագիրը
պէտք է պաշտօնական հաստատութիւն
ստանայ, որպէսզի նա կարողանայ ապա-
հով և ամուր կերպով գործել: Ահա այդ-
տեղ սկսվում են գիւղացիութիւնները: Միա-
գիւր շուտով չէ հաստատվում և գործը
կանգ է առնում, ստուգելով մարդկանց
եռանդն ու աշխոյժը:

Որպէս զի գործը աւելի լաւ առաջ
գնայ, կանոնադրութիւնը շուտ հաստատվի
և ընկերակցութիւնը օր առօր սկսէ իր
գործունէութիւնը, ամենանպատակաւոր-
ման այն է, որ ընկերակցութիւն կազմող-
ները իրանք իրանց կողմից նոր ծրագիր չը
կազմեն, այլ վերցնեն այն ընդհանուր կա-
նոնադրութիւնը, որ մշակված է երկրա-
գործութեան միջնորդութեան կողմից և
ուղղակի նրան ներկայացնեն հաստատելու
իրանց ընկերակցութեան համար: Այն ժա-
մանակ հաստատող ատենը այլ ևս ստիպ-
ված չէ լինում նորից կարգաւ ներկայաց-
րած ծրագրի ամեն մի կէտը, քննութեան
նիւթարկել ամեն մի փոփոխութիւն, տեղե-
կութիւններ ժողովել թէ ինչու կարելի
էն համարվել այս և այն փոփոխութիւնը:
Ազատ լինելով այդ աշխատանքից, միջնոր-
դութիւնը շատ շուտ ընթացք է տալիս
խնդիրներին և ընկերակցութիւնը շուտով
ստանում է կազմակերպութեան իրաւունք:

Ընդհանուր, նորմալ կանոնադրութիւնը
բաւականաչափ կարողութիւններ է տալիս
կազմակերպելու ընկերակցական գործը
լիակատար կերպով, մտնելով նրա մէջ
տնտեսութեան վերաբերեալ զանազան ձիւ-

ղերը: Եթէ կանոնադրութիւնը նոյն իսկ
ունի պակասութիւններ, պէտք է սկզբում
հոգ տանել ընկերակցութեան գործունէու-
թեան մասին և յետոյ ժամանակի ըն-
թացքում, երբ կը պարզվեն կանոնադրու-
թեան անյարմարութիւններ խնդրամասոյց
լինել այս և այն կէտի բարեփոխման մա-
սին: Դա գործնական հեշտ ճանապարհ է
ընկերակցութիւններ հիմնելու համար:

Իսկ ընկերակցութիւններ հիմնելու կա-
րէքը, որ մինչև այժմ դեռ շատ չէ զգաց-
վել մեր գիւղերում, կը սկսի շատ շուտ ե-
րեան գալ և կը դառնայ մեր կեանքի ան-
հրաժեշտութիւններից մէկը: Եւրոպական
երկրներում վերջին 20—25 տարիներում
մանր ընկերակցութիւնները այնպէս մեծ
թւով զարգացան, որ նրանք կերպարա-
նափոխեցին գիւղական տնտեսական գոր-
ծավարութեան եղանակները և շատ շու-
րանք, ուր երկրագործութիւնը ընկած
վիճակի մէջ էր, նրանք վերականգնեցին
նրան և զգալի կերպով առաջացրին:

Մանր գիւղական ընկերակցութիւնները
վերջին տարիներս սկսել են աշխուժութիւն
ունենալ և Ռուսաստանի ներքին նահանգ-
րում, ուր նրանց թիւը տարեցտարի ա-
ճում է:

Մենք պէտք է օգտվենք տնտեսական
առաջադիմութեան նպատակով մի այդպիսի
կարևոր գործունից և ծածկենք մեր երկիրը
գիւղատնտեսական ընկերակցութիւնների
ցանցով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Ն Վ Ե Բ Զ Ց Ա Ի Ե Բ

Անվերջ են, անթիւ են մեր գիւղացիների
ցաւերը...

Ականջ ջնեք գիւղերից եկած լուրերին,
տեսնե՛ք ինչքան են կատարվում այնտեղ:

Վերցնե՛ք Վարանդու դաւառի Նախիվանիկ
գիւղը: Դեռ մի ամիս առաջ մենք այնտեղ էինք,
արտերը հասունացած՝ տէրերին բերկրանք էին
պատճառում: Գարկառի փողով ձգված խաղողի
այգիները ման փալուց, գիւղացին ցոյց էր տա-
լիս տերերին արանքներից կանկալած խաղողի
խակ ողկոյնները և ժպտում չորհակալու-
թեամբ: Երբ, մօտիկ ապագայի յոյսն էր փայ-
լում ժպտի մէջ: Բայց ահա անցել է ամիսը,
հնձված արտերի խութները դարձված են կայե-

լով հանգրծած գլխի աղբիւնը մը չեն տուած
կրթական ապարդիւնի վրա, վասն զի գրանց
վարիչները ոչ թէ մեր միջովայրի պահանջ-
ներն ունին ի չկառի, այլ բողոքական դաւա-
նութեան պրօպագանդան, աւետարանական
ճշմարտութիւնների տարածումը բռն իրենց
հասկացողութեան և հայեցողութեան: Դրանց
բոլոր աշխատութիւնների նպատակը կարծես
մեր հասարակութեան մէջ Ամբիկայի կապիկ-
ներ լինելը լինի, ուրիշ ոչինչ:

Գաթօլիկներ վերջի ծանօթ դէպքերէն յետոյ,
7 տարիներ է ի վեր է, որ սկսել են գործել,
նրանց նպատակն ևս միակողմանի, անձուկ
մտքով ըմբռնած պրօպագանդա է դարձեալ
և առ այժմ բարձր խանդարել է և կրթական
գործը իր մակարդակից իջեցնել է աւելի մի
արդիւնք չունին տուած, վասն զի ամենից
անպէտք անհեղու և ամենին անարար ձեռ-
ներու միջին են յանձնում կրթական ուղի
գործը:

Գալով մեր ծխական դպրոցներին, 50 տա-
րիէ աւելի է, որ գոյութիւն ունին դրանք և
չը նայելով որ եկեղեցիների կալուածական
հատկութիւնով ապահովուած են և վերջին քանի
ամ տարիների ընթացքում էլ աշակերտներից
թուլի ևս սկսել են գնաձել, բայց էլ չեն կա-
րող բաւականաչափ կերպով գոհացում տալ
այս բողոքական գաւառի բազմաթիւ պա-
հանջներին: Թաղականութիւններ և հողաւար-
ձութիւններ, որոց յանձնած է այդ ուսում-

րում, խաղողի ողկոյններն էլ աւելի են մեծա-
ցել, աւելի են հրճեցնում տէրերին: Զու-
յոյսեր... Կէս գիշերին երկինքն է ներկվել
քրքմագոյն ներկերով, — այդ խութներն են,
վառվում են միմեանց յետևից... Կէսօրին գիւ-
ղացիներն են այգիներից վերադարձել և ու-
ժապառ, ուշաթափ դրութեամբ զորվում են
սրահում և՛ չայգի, այգի... մրմնջում:
5000-ից աւելի վագեր են կտրված: Երէկվայ
արտերի փոխարէն՝ այսօր մոխիրն է վկայում:
Կանաչ այգիների տեղ՝ կտրված վագերից չո-
բաւած ողկոյններն են նայում...

Ով գիւղացի է և գէթ մի անգամ մածը իր
ձեռքով բռնած մի ակօս է անցել, կամ տնկել
է թէկուզ ոչ մի ամբողջ այգի, այլ մի փոքրիկ
ծառ ու անցեցրել, ապա նա, միայն նա կը զգայ,
թէ ինչ է նշանակում անթիւ խութների կրա-
կէն ու 5000 վագ կտրած անտէրը: Մորթի
գիւղացու որդուն, նա կը մոռանայ, բայց վա-
ռած ցորենն ու կտրած այգին՝ երբէք:

Բայց ովքեր են այդ հէշերը, ովքեր են
գիւղացու մէջը կտրող այդ անառաւանդնե-
րը: Ահա, խութը կրակողներն են հէնց իրանք,
գիւղացիք, իսկ վաղ կտրողները, հարեան
թուրքերը, որ աւելի տմարդի են, քան քրք-
րերը:

Այս, այդ անհաւատարիմ հարևանները, որ
հինգ կօպէկով պատրաստ են ոճի գործելու...
Դրանք ցեցեր են, մի դադարկապօրտ, մեղկ
տարր, որ միայն ուրիշի հաշով ապրել գի-
տեն: Թուրք չօլիսիսները խրատի փոխարէն՝
թող ներքոնք կարգան նրանց զլխին, թող
փառաբանեն նրանց, բայց մենք լաւ ենք ճա-
նաչում, մենք գիտենք, թէ նրանք ինչքան ան
կատարում, ինչքան են բերում հայ գիւղական-
ների զլխին: Լրաբերն առում է, որ սեն ու
ձմերուկի կարօտ են մնացել, որովհետեւ գիւ-
ղից ներքև իջնող անապատն իրան ենթար-
կում է վտանգի: Թուրքերը մեր հանդերձից
ափնայտան կերպով քրում են մեր նախիրը և
ամեն մի տաւարին 5 ռուբլի առնելով, նորից
տիրող տալիս: Զիտը բերում են այգիներում
բաց թողնում, փչացնում այգին, տղայ ես,
համարձակվիր դուրս անելու: Կեանքը կը տու-
ժեա, այգիդ, ապրանքներդ վտանգի կենթար-
կես:

Անվերջ են այդ չարիքները և անվերջ էլ կը
մնան, եթէ ձեռնհաս անձնաւորութիւններ օգ-
նութեան չը հասնեն: Թող թուրքներն առ այժմ
չարժանակին իրանց փրօպագանդութիւնները,
բայց ինչպէս հայ գիւղացիք, մէկից միւսին լու-

նարանների ամբողջ մատակարարութիւնը,
շատ անգամ կազմած են լինում դպրոցական
գործերից ոչ մի հասկացողութիւն չունեցող
անձինքներից, որոնք սաէպ իրանց անձնական
չահերը քաճառեցները, եւր շատ աւելի դե-
րաւան են համարում հանրային շահին, և դրա
համար էլ մեծ ծխական վարժարաններ միշտ
անկեալ և ողորմելի կացութեան մէջ են
եղել:

Վերջի երկու տարեւայ ընթացքում մեր
ծխական վարժարանների քանի մ' ուսուցիչ-
ներն մաքում մի գաղափար կազմեցին ծխա-
կան վարժարանները այդ անկած վիճակէն
բարձրացնելու մասին: Դրա համար էլ կազ-
մեցան ծրագրերը, կանոնադրութիւններ և
այլն և վերապէս հիմք դրուեց կենսաբանական
վարժարանի մը: Մեր բոլոր ծխական ուսում-
նարանները այսօրու 6 տարեւայ ընթաց-
քով մի նախալիք տարան պէտք է լինին, իսկ
այն տեղերից աւարտողները 6 տարի ևս պիտի
չարժանակին իրանց ուսումը կենսաբանականին
մէջ: Խորհուրդը լաւ, խօսք չունի, բայց չէ
որ ամեն լաւ խորհուրդներն իսկ ամուլ և
կայարդիւն կը մնան, եթէ ձեռնհաս ուժեր պա-
կասին ինչպէս մեր պարոն ուսուցիչները չեն
ուզում գէթ համեստութիւն ունենալ մտա-
ծելու համար, որ իրանք 12 տարի ուսում
տալու կարողութիւնից դուրս են և այնչափ
երկար ժամանակ մասնակներ մեր դպրոցների
մէջ չարչարելով, փթացնելով ոչ թէ օգուտ,

ծելու համար, նրանց աւարտէ՞ղ դուրս քանչև...

Վերջացնելով այս տեղեկութիւնները, յայտ-
նում ենք մեր ամենախորին համոզմունքը,
գիւղական անթիւ ցաւերից շատերն են բուժե-
լի, եթէ միայն գիւղերում, աւելի չեն առում,
ունենայինք միմիայն մի-մի հատ օրոտցաւ,
եռանդուն, ինտելիգենտ գիւղացի: Մեր օ-
րէնքները ոչ մի ոտնձգութեան չեն համբե-
րում: Մի երկու տարվայ եռանդուն մաքա-
ռումներ այդ ոտնձգութիւնների դէմ, և հայ ու
թուրք հասարակութիւնները կը հասկանան, որ
քաճառեցող հասարակաց կեանքում տեղ չէ
բռնում: Բայց միթէ միայն այդ կարող է ա-
նել մեր ուզած մարդը:

Մեր է նա, թող դուրս գայ:

Մ. Տէր-Նանիկեանց

ՆԱՄԱԿ ԲՈՐԺՈՄԻՑ

Օգոստոսի 7-ին

Գեղանկար է Բորթոմը իր չրջակայքով, նա
Կովկասի ամենագրաւի անկիւններից մէկն է
և կարող է իրաւամբ պարծենալ ընութեան
հրաշագեղ գոհարներով, որով նա առատօրէն
զարգարված է:

Բորթոմը ձգված է ձորի մէջ, չրջակայքում
անտառախիտ օտարեով, նրա միջով անցնում
է Կուրը, որի պոտոր հոսանքին միանում են
այստեղ Բորթոմ և Սև լեռնային գետակների
ջրերը: Այստեղի կլիման բարեխառն է և զո-
վարար, քամիների հոսանքը մեղմ: Երբեմն ե-
րեկոյները խոնավութիւն է նկատվում Բորթոմի
օտարին մասերում, ուր գտնվում են հոյակապ
ամառանոցները և համալսարանի ջրերի պարկը: Իսկ
ինչ վերաբերում է լեռնային մասին, այստեղ
օդը միշտ թաւր է և առողջարար: Վերջին
տարիները վերին մասի տների թիւը նկա-
տելի չափով բազմացնում է: Բնակարանների
գնեքը թէև համեմատաբար մատչելի են, սա-
կայն շինութիւնները սակաւ բացառութեամբ
անյարմար են բնակութեան համար:

Բորթոմը պատկանում է Մեծ Իշխան Մի-
խայիլ Նիկոլայիին, որ ունի այստեղ իր
ամառային պալատը: 2 վերստ հեռու Լիկանի
կոչված տեղում Կուր գետի ափին գտնվում է
նրա աւագ որդի Մեծ Իշխան Նիկոլայ Միխայ-
լովիչի գեղեցիկ ամառանոցը, մասերտնական
ճաշակով շինված, իր եղնեայ պարկով, տեղ
տեղ ցրված փոքրիկ արձաններով, փարթամ
ծաղկատանով և արհեստական լճով, ուր
հանդիստ լողում են սպիտակափայլ կտրապ-

այլ անդամների վրա միայն կայ այդ խնդ-
ների ապագային:

Վերջապէս մի քանի խօսք ևս Երամանի
հայկական որաւանցի վարժարանի մասին:
Դրան և հինգ տարի է, որ Երամանի հիմնել է
այս դպրոցը, ի սկզբան գիւղութիւն որաւանց է
եղել, բայց քանի մը տարի վերջ թոյակատե-
րների ցերեկօթիկ վարժարանի է վերածվել,
սակայն ամեն տարի ընդհանուր աշակերտների
1/3-ը միշտ աղքատիկ, որք և կարօտ ձրիա-
վարժներ են եղել: Երամանի մի տոկոսն, աչ-
խատառէր և եռանդուն գործիչ է եղել: Զը
նայելով որ 12 տարեկան հասակում ծաղկի
հիւանդութեամբ երկու աչքերից ևս զրկվում է,
բայց օժտված լինելով զարմանալի ուշիմու-
թեամբ, նուիրվում է բոլորովին ուսման և
այժմ Վանի մէջ նրա նման հմուտ հայերէնի,
պատմութեան և կրօնական գիտութեան ոչ
ոք կայ, լաւ խօսում է նաև ֆրանսերէն և
պերճախօս ասեմարանի անուն ունի մեր քա-
ղաքին մէջ: Նա իր հիմնած և 25 տարիներէ
ի վեր լսելի մնչիկ այլ յարատեւ գործունէու-
թեամբ վարած վարժարանին մէջ է փրկու-
ված իր բովանդակ լի յարմարութեան ու
կեանքը և դրա գոյութիւնը պահպանելու հա-
մար գոհել է ամեն ինչ, որ ունի և իբրեւ պան-
ծալի վարժարարութիւն իր ջանքերին այսօր
գոհունակութեամբ է տեսնում, որ իր վար-
ժարանը նախանձելի բարձր դիրք մը ունի
մեր քաղաքի բոլոր ծխական կամ այլադաւան

Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванская ул.